մօտ, Պալխար վտակին: Պալխար վտակը մինչեւ Պալխար աւանը հասնելը ուղղում է աջկողմի առուներով Մերէխի եայլան, Պալխար վտակի եւ Հինդկարիս առուակի միացման անկիւնի մօտ: Հինդկարիսի ձախ ափումն է գտնուում Պալխար աւանը, ուր լեռնադաշտը 4500′ բարձրութիւն ունի: Այս աւանը մի ամփոփ քաղաքի շուկաների, դրծարանների շարքեր չունի, նա ընդարձակ պարտէզներ ու այգեստաններ է, պտղատու ծառերով զարդարուած, մօտ 4—5 կիլոմետր երկարութեամբ եւ 3—4 կիլոմետր լայնութեամբ, ուր մարդիկ ամփոփուած իրենց այգեստաններում եւ պարտէզներում, շատ քիչ են իրար հանդիպում, ուր կանայք զարդարուած իրար չեն դիմաւորում փողոցներում, աղօթարաններում կամ բաղնիսներում, այլ միայն կարիք եղած ժամանակ իրար այդի են մտնում որեւէ ուտելիք կամ գործիք փոխ վերցնելու:

Այս ընդարձակ այգեստանները, բարձր ընկուզենիները, կաղամախիներն ու նոճիները այնպէս են ծածկած աւանը, որ բացի դալար տերեւներից ուրիշ ոչինչ չի կարող նկատել այցելուն: Դալար, ծառ ու այգեստան, այնպէս են գրաւում ուշքն ու միտքը, որ էլ ոչինչ չի նկատում ճամբորդը: Բայց մի կիլոմետր ցածրից վեր գնալուց յետոյ նկատելի է բերդի, միջնաբերդի աւերակ պատերը, կործանուած շէնքերի թումբերը,